ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ԵՄ-ԳՀԾՁԲ-20/2-2»

ք. Երևան

«26» 02 2020 թ.

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն, ի դեմս կազմակերպության տնօրենի ժ/պ Գ. Ավետիսյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«Ապարանսերվիս» ՍՊԸ-ն,** ի դեմս տնօրեն **Ս. Ղազարյանի**, որը գործում է **«Ապարանսերվիս» ՍՊԸ-ի** կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 1 739 500 **(մեկ միլիոն յոթ հարյուր երեսունինը հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ**:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:[31]

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[22] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[23]

---

[20] *Կատարողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Պատվիրատուի և Կատարողի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:[21] Պարբերությունը հանվում է, եթե ծառայությունը չի վերաբերում ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգմանը:*

[22] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

[23] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ, ք. Երևան, Բաղրամյան 78 «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Հ/Հ 163007096304 ՀՎՀՀ 00000911	«Ապարանսերվիս» ՍՊԸ, ք. Երևան, Ծովակալ Իսակովի 32, 32/5 Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ ՓԲԸ Հ/Հ 220513331136000 ՀՎՀՀ 01298168
(ստորագրություն) Կ.Տ. Տնօրենի ժ/պ Գ. Ավետիսյան	(ստորագրություն) Կ.Տ. Տնօրեն Ս. Գազարյան

Հավելված N 1
« 26 » 02 2020 թ. կնքված
«ԵՄ-ԳՀԾՁԲ-20/2-2» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
6	50111130/6	**Լադա Լառգուս /2016թ / մակնիշի ավտոմեքենայի վերանորոգման ծառայություն (Հավելվածը կցվում է)**	դրամ	**մինչև 1 739 500**	1	Ծառայությունը մատուցվելու է պայմանագիր կնքած մասնակցի գործունեության հասցեում	**Պայմանագրի կնքման օրվանից՝ 20 օրացուցային օր հետո, մինչև 25.12.2020թ •**
Ընդամենը				**մինչև 1 739 500**			

* Կատարողը պարտավոր է՝ պայմանագիրն օրենքով ուժի մեջ մտնելուց հետո սահմանված ծառայությունները Պատվիրատուի պահանջով մատուցել՝ նման պահանջ առաջանալուց առնվազն 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում:

* Ավտոպահեստամասերը պետք է լինեն՝ գործարանային արտադրության, փակ տուփով և գործարանային համարակալմամբ, նոր և չօգտագործված, նախատեսված նշված մակնիշի ավտոմեքենայի համար: Կատարողը երաշխավորում է իր կողմից սույն պայմանագրի շրջանակներում տրամադրված ծառայությունների և փոխարինված ավտոպահեստամասերի որակը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ,
ք. Երևան, Բաղրամյան 78
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163007096304
ՀՎՀՀ 00000911

(ստորագրություն)
Կ.Տ.
Տնօրենի ժ/պ Գ. Ավետիսյան

ԿԱՏԱՐՈՂ

««Ապարանսերվիս» ՍՊԸ,
ք. Երևան, Ծովակալ Իսակովի 32, 32/5
Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ ՓԲԸ
Հ/Հ 22051333113600 0
ՀՎՀՀ 01298168

(ստորագրություն)
Կ.Տ.
Տնօրեն Ս. Ղազարյան

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ – ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Զափաբաժին 6* Լադա Լառգուս 2016թ / Лада Ларгус 2016 Ընթացիկ, միջին և հիմնական նորոգման աշխատանքների անվանումները Наименование		Ծառայության միավորի առավելագույն գինը
1	**50111130 (CPV)**		
1	Բռնկման համակարգի ստուգում	Проверка системы зажигания	1000
2	Կցորդման համակարգի ստուգում	Проверка системы сцепления	1000
3	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	Проверка работы АКПП	1000
4	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	Проверка работы раздаточной коробки	1000
5	ABS համակարգի ստուգում	Проверка системы ABS	1000
6	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	Проверка работы электрооборудования	1000
7	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	Проверка работы системы управления	1000
1. Շարժիչ (двигатель)			
8	Շարժիչի հանում և տեղադրում	Снятие и установка двигателя	45000
9	Շարժիչի քանդում արատավորում և հավաքում	Ремонт двигателя включая все работы	40000
10	Շարժիչի գլխիկի հանում տեղադրում միջադիրի փոխարինումով	Разборка и дефектовка двигателя с последующей сборкой	30000
11	Փականների խցուկների փոխարինում 1 կ-տ	Замена пружин клапанов джигателя	10000
12	Հրիչների կամ հիդրոհրիչների փոխարինում 1 կ-տ	Замена сальника клапанов 1 к-т	10000
13	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	Замена переднего сальника коленвала	5000
2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ (Системы управления, питания и смазки)			
14	Յուղի և յուղի զտիչի փոխարինում	Замена масла и масляного фильтра	1000
15	Համակարգչային ախտորոշում, թերությունների վերացմամբ	Компьютерная диагностика с устранением неполадок	
16	Վառելիքի փողրակի փոխարինում	Замена топливного шланга	2000
17	Կոնդիցիոների զտիչի փոխարինում	Замена фильтра кондиционера	
18	Օդի զտիչի փողրակի հանում և տեղադրում	Снятие и установка шланга воздушного фильтра	2000
19	Բենզամղիչի փոխարինում	Замена бензонасоса	5000

20	Զրի խողովակի, փողրակի փոխարինում	Замена шланга водянной потрупки	2000
3. Սառեցման և արտածման համակարգ			
21	Հովհարի փոխարինում	Замена вентилятора	5000
22	Ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена радиатора	8000
23	Զրի մղիչի փոխարինում միջադիրով	Замена водяной помпы с прокладкой	15000
24	Գեներատորի փոկի փոխարինում	Замена ремня генератора	5000
25	Զրի ռադիատորի վերանորոգում	Ремонт радиатора охлаждающей жидкости	30000
26	Խլարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	Замена датчика катализатора глушителя	5000
4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ (Сцепление, АКПП, МКПП)			
27	ՓՏ-ի և ԱՓՏ-ի հանում և տեղադրում	Снятие и установка коробки передач и автоматической коробки передач	25000
28	ԱՓՏ-ի յուղի փոխարինում	Замена масла автоматической коробки передач	
29	ԱՓՏ-ի զտիչի լվացում, մաքրում՝ քարտերի հանում և տեղադրումով	Промывка и чистка фильтра автомат, коробки передач со снятиеми установкой картера	
5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ (Раздаточная коробка, карданный вал)			
30	Բաշխիչ տուփի առանցքակալի փոխարինում	Замена подшипника раздаточной коробки	10 000
31	Տվիչի փոխարինում	Замена датчика	5 000
6. Առջևի և հետևի կամրջակներ (Передний и задний мосты)			
32	Առջևի կամրջակի կիսասռնու առանցքակալի խտաբուկերի փոխարինում	Замена сальника подшипника полуоси переднего моста	10 000
33	Կամրջակի յուղի փոխարինում	Замена масла моста	5 000
34	Առջևի կամրջակի տվիչի փոխարինում	Замена датчика переднего моста	10 000
35	Հետևի կամրջակի կիսասռնու առանցքակալի խտաբուկերի փոխարինում	Замена подшипника полуоси заднего моста	10 000
7. Կախոց (Подвеска)			
36	Տրավերսի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена траверса	20000
37	Ձախ կամ աջ հոդակապի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена левого или правого шарнира (ШРУС)	8000
38	Առջևի անվակունդի առանցքակալի փոխարինում	Замена подшипника передней ступици	8000
39	Առջևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена передней ступици	8000
40	Հետևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена задней ступици	8000

41	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	Замена подшипника задней ступици	8000
42	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	Замена чашек амортизатора	5000
43	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена переднего амортизатора	8000
44	Վերևի լծակի վռանների փոխարինում 1 հատ	Замена втулок верхнего рычага 1шт	4500
45	Առջևի կայունարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена переднего стабилизатора	5000
46	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	Замена втулок переднего стабилизатора	4000
47	Առջևի կայունարարի կալունակի փոխարինում	Замена кронштейна переднего стабилизатора	3000
48	Առջևի կայունարարի կանգնակի փոխարինում	Замена стойки переднего стабилизатора	5000
49	Հետևի կախոցի անվաբացքի կարգավորում	Устранение сход-развала задней подвески	5000
50	Հետևի ցնցամեղմիչի փոխարինում	Замена заднего амортизатора	8000
8. Ղեկային մեխանիզմ (Механизм рулевого управления)			
51	Ղեկային ձգաձողի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и утановка или замена рулевой тяги	6000
52	Ղեկի հանում տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена руля	8000
53	Հիդրոուժեղարարի համակարգի յուղի փոխարինում	Замена масла в системе гидроусилителя	3000
9. Արգելակային համակարգ (Тормозная система)			
54	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена переднего суппорта	5000
55	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена заднего суппорта	5000
56	Առջևի սուպպորտի վերանորոգում	Ремонт переднего суппорта	5000
57	Հետևի սուպպորտի վերանորոգում	Ремонт заднего суппорта	5000
58	Արգելակային փողրակի փոխարինում	Замена тормозного шланга	5000
59	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	Замена передних тормозных колодок	5000
60	Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում	Замена задних дисковых тормозных колодок	6000
61	Հետևի թմբուկային կոճղակների փոխարինում	Замена задних барабанных колодок	7000
62	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	Замена передних томозных дисков	7000
63	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում 1հատ	Замена заднего тормозного диска 1 шт	7000
64	Ձեռքի արգելակային մեխանիզմի վերանորոգում	Ремонт механизма ручного тормоза	7000
65	Ձեռքի արգելակի կոճղակների փոխարինում	Замена колодок ручного тормоза	10000

10. Էլեկտրասարքավորում (Электрическое оборудование)			
66	Գեներատորի առանցքակալի փոխարինում	Замена подшипника генератора	6000
67	Գեներատորի փոկանիվի փոխարինում	Замена шкива генератора	6000
68	Մեկնարկիչի քանդում և արատավորում, հավաքում	Разборка дефектовка и сборка стартёра	12000
69	Մեկնարկիչի խարիսխի փոխարինում	Замена якоря стартёра	5000
70	Մեկնարկիչի բենդեքսի փոխարինում	Замена бендекса стертбра	5000
71	Մեկնարկիչի ավտոմատի փոխարինում	Замена автомата якоря	5000
72	Մեկնարկիչի ռելեի փոխարինում	Замена реле стартёра	6000
73	Մեկնարկիչի ածուխների փոխարինում	замена щётки стартёра	6000
74	Առջևի լապտերի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена передней фары	2000
75	Հետևի լապտերի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена заднего фонаря	2000
76	Առջևի լապտերների կարգավորում	Настройка передних фар	4000
77	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	Снятие и установка или замена замка зажигания	10000
78	Վառոցքի կոճի հանում և տեղադրում	Снятие и установка или замена катупки зажигания	5000
79	Ինդուկցիոն կոճի հանում և տեղադրում	Снятие и установка индукционной катушки	5000
80	Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում	Снятие и установка центрального замка дверей	5000
81	Դռների էլ/փականի փոխարինում	Замена элзамка дверей	10000
82	Ապակեամբարձիչի փոխարինում	Замена стеклоподъёмника	10000
83	էլեկտրական տվիչների փոխարինում	Замена электричиских датчиков	3000
84	Վառոցքի լարերի խրձի փոխարինում	Замена связки высоковольт-ных проводов зажигания	5000
85	Զրի ցողիչի փոխարինում	Замена дачика охлаждающей жидкости	2000
11. Ավտոմեքենայի սրահ (Салон автомобиля)			
86	Դռան փականի փոխարինում	Замена дверных замков	8000
87	Դռների դրսի բռնակ փոխարինում	Замена наружных дверных ручек	8000
88	Դռների ներսի բռնակ փոխարինում	Замена внутренних дверных ручек	8000
89	Լամպի փոխարինում	Замена лампы	1000
12.Այլ ծառայություններ (Прочие работы)			
90	Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում *գին 1*	Шлифовка, покраска и правка кузова	3000

	սմ2-ի համար	автомобиля цена за 1 см2	
91	Եռակցման աշխատանքներ *գին 1սմ (գծ.մ) համար*	Сварочные работы цена за 1 см (п/м)	2000
92	Խառատային աշխատանքներ *գին 1 կտորի համար*	Токарные работы цена за1 деталь	2000
93	Փականագործական աշխատանքներ *գին 1 ժամ աշխատանքի համար*	Слесарные работы цена за 1 час	2000
94	Առջևի կամ հետևի անվաբացքի կարգավորում	Проверка переднего и заднего схождения колес автомобиля	5000
95	Կոնդիցիոների լիցքավորում	Заправка кондиционера	30000
96	Անիվի հանում և տեղադրում	Снятие и установка или замена колеса	1000
97	Անիվի բալանսավորում	Балансировка колёс	1000
1.Շարժիչ (Двигатель)			
1	Բարձիկ	Подушка	45 000
2	Շարժիչի փական դուրս մղող	Клапан двигателя выпускной	10 000
3	Շարժիչի փական ներս մղող	Клапан двигателя впускной	10 000
4	Շարժիչի փականի խտաբուկ	Маслосъёмный колпачок клапана двигателя	2 000
5	Ծնկաձև լիսեռի խտաբուկ առջևի	Переднее уплотняющее кольцо коленвала	10 000
6	Ծնկաձև լիսեռի խտաբուկ հետևի	Заднее уплотняющее кольцо коленвала	10 000
7	Մխոց	Пошень	40 000
8	Շարժիչի շղթա	Цепь двигателя	60 000
9	Շղթա	Цепь	60 000
10	Հիդրոձգան	Гидронатяжитель	10 000
11	Շարժիչի կալուն	Калун двигателя	25 000
12	Շարժիչի հանդարտիչ	Шестерня	20 000
2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ, Система управления,топливная и смазочная система			
13	Կոնդիցիոների զտիչ	Фильтр кондиционирования воздуха	
14	Վառոցքի մոմ	Свеча зажигания	6 500
15	Բենզոբաքի բենզոմղիչի ցանց	Сетка бензанасоса бензабака	3 000
16	Բենզոմղիչ	бензанасос	50 000
17	Վառելանյութի փողրակ	Топливный шлаг	4 000
3. Սառեցման և արտածման համակարգ			
18	Ռադիատորի փողրակ ներքևի	Шланг радиатора нижний	10 000
19	Ռադիատորի փողրակ վերևի	Шланг радиатора верхний	10 000
20	Թերմոստատ	Термостат	15 000
21	Փոկ մեծ	Ремень большой	10 000

22	Հովացման հեղուկ	Охлаждающий жидкости	2 500
4. Կցորդում, ՄՏ և ԱՄՏ Сцепление, АКПП и МКПП			
23	ՄՏ-ի յուղ (կիսասինթետիկ 75/90)	Масло МКПП (полусинтетическое75/90)	8 000
24	ԱՄՏ յուղ ATS-U DEXTRON-6, *1լ*	Масло автоматической коробки передач *1л*	
25	Հերմետիկ	Герметик	5 000
5. Կախոց Подвеска			
26	Առջևի անվակունդ	Ступица переднего правого колеса	60 000
27	Հետևի անվակունդ	Ступица переднего левого колеса	60 000
28	Անվակունդի արտաքին առանցքակալ	Внешний подшипник передней ступицы	30 000
29	Հետևի անվակունդի արտաքին առանցքակալ	Внешний подшипник задней ступицы	30 000
30	Ձախ կամ աջ հոդակապի խտաբուկ	Уплотнительное кольцо правого или левого ШРУСа	5 000
31	Հարվածամեղմիչի թասակ	Чашка амортизатора	30 000
32	Առջևի հարվածամեղմիչ	Передний амортизатор	60 000
33	Ներքևի լծակ	Нижняя рогатка	50 000
34	Ներքևի լծակի վռան	Втулка нижней рогатки	10 000
35	Գնդե հոդակապ	Шаровая опора	20 000
36	Առջևի կայունարարի վռան	Чехол шаровой опоры	8 000
37	Առջևի կայունարարի կալունակ	Передний стабилизатор	10 000
38	Առջևի կայունարարի կանգնակ	Втулка переднего стабилизатора	18 000
39	Հետևի կայունարարի վռան	Втулка заднего стабилизатора	8 000
40	Հետևի կայունարարի կալունակ	Опора заднего стабилизатора	10 000
6. Ղեկային մեխանիզմ Механизм рулевого управления			
41	Հիդրոուժեղարարի յուղ, (DEXTRON-3) *1լ*	Жидкость для гидроусилителя *1 л*	8 000
7. Արգելակային համակարգ Тормозная система			
42	Գլխ. գլան	Главный цилиндр	80 000
43	Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	Комплект передних тормозных колодок	5 000
44	Հետևի սկավառակային կոճղակ	Комплект задних тормозных колодок	5 000
8. Էլեկտրասարքավորում (Электрическое оборудование)			
45	Գեներատորի ռելե	Реле генератора	6 000
46	Գեներատորի առանցքակալ	Подшипник генератора	10 000
47	Մեկնակիչի ածուխ	Щётка стартёра	8 000
48	Հակամշուշային լապտերի լամպ	Противотуманная фара	5 000
49	Արգելակային լապտերի լամպ	Тормозная стоп фара	2 000

50	Վառոցքային լարերի խուրց	Связка высоковольтных проводов зажигания	25 000
51	էլեկտրաամբարձիչ	Электроподъёмник	35 000
52	էլեկտրաամբարձիչի շարժիչ	Моторчик электроподъёмника	30 000
Ընդամենը/դրամ			1 739 500
Մասնակցի առաջարկած գինը			667 000

***Պարտադիր պայմաններ՝**

1. Ավտոտոխսպասարկման կայանը պարտադիր պետք է գտնվի Երևան քաղաքում:
2. Անհրաժեշտության դեպքում միևնույն ժամանակ կարողանա սպասարկել պատվիրատուի կողմից նշված քանակով մեքենաներ:
3. Քարշակի ծառայությունը իրականացվում է մատակարարի ուժերով:
4. Ընդհանուր դիագնոստիկան (կետ 1-7) կատարվում է տեխնիկական սպասարկում իրականացնողի կողմից:
5. Մատուցվող ծառայությունների երաշխիքը 6 ամիս :

Հաճախորդի կողմից ներկայացված դժգոհության դեպքում, մատակարարը պարտավոր է մատուցել ծառայություն 2-5 օրվա ընթացքում:

Պետք է ունենալ՝

1. Անհրաժեշտության դեպքում, Հաճախորդի պահանջով, ավտոմեքենան պետք է վերանորոգվի իր կողմից նշված վայրում:
2. Անփոփոխ հավասարակշռված հաշվեկշիռ
3. Հաշմանդամային սայլակի տակդիր
4. Մեկ վայրում աշխատելու հնարավորություն, մինիմում 4 կռունկի վրա:
5. Համալրվածություն անհրաժեշտ սարքավորումներով և տեխնիկական ծրագրային ապահովում, դիագնոստիկայի և էլեկտրոմոբիլների անսարքությունների համակարգի վերացման:

Հավելված N 2
«26» 02 2020 թ. կնքված
«ԵՄ-ԳՀԾՁԲ-20/2-2» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
6	50111130/6	Լադա Լառգուս / 2016թ / մակնիշի ավտոմեքենայի վերանորոգման ծառայություն	...	1 739 500	1 739 500	1 739 500	1 739 500	1 739 500	1 739 500	1 739 500	1 739 500	1 739 500	1 739 500	1 739 500	1 739 500

***Վճարումներն իրականացվելու են Պայմանագրի գործողության շրջանակներում, փաստացի մատուցված ծառայությունների չափով՝ Կատարողի կողմից հաստատված և ներկայացված հաշիվ-ապրանքագրերի և հաստատված ընդունման-հանձնման արձանագրությունների հիման վրա:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ,
ք. Երևան, Բաղրամյան 78
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163007096304
ՀՎՀՀ 00000911

(ստորագրություն)
Կ.Տ.
Տնօրենի ժ/պ Գ. Ավետիսյան

ԿԱՏԱՐՈՂ

«Ապարանսերվիս» ՍՊԸ,
ք. Երևան, Ծովակալ Իսակովի 32, 32/5
Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ ՓԲԸ
Հ/Հ 220513331136000
ՀՎՀՀ 01298168

(ստորագրություն)
Կ.Տ.
Տնօրեն Ս. Ղազարյան

Հավելված 4.1
«ԵՄ-ԳՀԾՁԲ-20/2»* ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(որակավորման ապահովում)

ք. Երևան «26» 02 2020թ.**

<<Ապարանսերվիս>> ՍՊԸ,-ն ի դեմս Ընկերության տնօրեն Ս. Ղազարյանի, 008293870, տրված 09.04.2018թ.
Ընկերության անվանումը Ընկերության տնօրենի անուն ազգանունը, անձնագրային տվյալները, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է **«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ**-ի * (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից Կազմակերպված՝ **ԵՄ-ԳՀԾՁԲ-20/2*** ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից, կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում, Ընկերությունը, Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ՝

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, եթե այն հանգեցնում է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծման, Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱԲՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Պատվիրատուի կողմից կնքված պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:**

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

<<Ապարանսերվիս>> ՍՊԸ

ընկերության անվանումը

ք. Երևան, Ծովակալ Իսակովի 32, 32/5

ընկերության հասցեն

Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ ՓԲԸ

ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

22051338136000

Հ.Ա.Ա.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՌՁՈՒՅԼՈՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
"ԱՊԱՐԱՆՍԵՐՎԻՍ"
"APARANSERVICE"
01298158
REPUBLIC OF ARMENIA LIMITED LIABILITY COMPANY

Հ.Ա.Ա.

2020թ.

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

*** Եթե գնման առարկա է հանդիսանում շինարարական ծրագրերի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերումը, ապա կետը շարադրվում է հետևյալ խմբագրությամբ՝ «2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Ընկերության կողմից կնքված պայմանագրով սպանձնած պարտավորությունների ամբողջական կատարմանը հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:».*

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ***

2. Թիվ

3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն ՝ Ապարանսերվիս ՍՊԸ

5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ ՓԲԸ

6. Վճարողի հաշվի համարը՝ 220513331136000

7. Վճարողի ՀՎՀՀ՝ 01298168

8. Վճարողի ՀԾՀ՝ 5907830352

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն ՝ **«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ**

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝ **00000911**

12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ**

13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) **163007096304**

14.Գումարը (թվերով և բառերով)՝ 1 739 500 (մեկ միլիոն յոթ հարյուր երեսունինը հազար հինգ հարյուր)

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)՝ հայկական դրամ (AMD)

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(որակավորման ապահովման համար)*

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝

19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.S.	21.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 21.բ. Կ.S.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/

24.բ. Կ.Տ. 24.գ "___" ___ 20___ թ.	23.բ. Կ.Տ. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

** Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*

Հավելված 5.1
«ԵՄ-ԳՀԾՁԲ-20/2»* ծածկագրով
գնանշման հարցումի հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի ապահովում)

ք. Երևան

«26» 02 2020թ.**

<<Ապարանսերվիս>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ս. Ղազարյանի, 008293870, տրված 09.04.2018թ.
Ընկերության անվանումը
Ընկերության տնօրենի անուն ազգանունը, անձնագրային տվյալները

որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

3. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է **«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի** * (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից Կազմակերպված՝ **ԵՄ-ԳՀԾՁԲ-20/2*** ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.6 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.7 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.8 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.9 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.10 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

4. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող

պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

<<Ապարանսերվիս>> ՍՊԸ

ընկերության անվանումը

ք. Երևան, Ծովակալ Իսակովի 32, 32/5

ընկերության հասցեն

Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ ՓԲԸ

ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

220513331136000

ընկերության բանկային հաշվեհամարը

01298168

ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը

Ս.Ղազարյան

ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

Կ.տ.

/2020թ.

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

1.

ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ*

2. Թիվ

3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն ՝ Ապարանսերվիս ՍՊԸ

5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ ՓԲԸ

6. Վճարողի հաշվի համարը՝ 220513331136000_

7. Վճարողի ՀՎՀՀ՝ 01298168

8. Վճարողի ՀԾՀ՝ 5907830352

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն ՝ **«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ**

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝ **00000911**

12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **«ՀայէկոնոմԲանկ» ԲԲԸ**

13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) **163007096304**

14.Գումարը (թվերով և բառերով)՝ 173 950 (մեկ հարյուր յոթանասուներեք հազար ինը հարյուր հիսուն)

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)՝ հայկական դրամ (AMD)

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(պայմանագրի ապահովման համար)*

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝

19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.S.	21.ա. Վճարողի ստորագրությունները /_____/ /_____/ 21.բ. Կ.S.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/

24.գ "___" ___ 20___ թ.	23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

** Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*